Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 730 - Ա
որոշման

«ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության 115 հանրակրթական դպրոցների վերազինում նորագույն ինտերակտիվ դիսպլեյներով՝ որպես կրթության հիմնարար իրավունքի իրացման արդյունավետության բարձրացման միջոց: Տեխնիկան հնարավորություն կտա ժամանակակից դասավանդման մեթոդաբանության և վիզուալիզացիայի միջոցով, այդ թվում՝ Աշխարհացույց կրթական հարթակի օգտագործմամբ, բարձրացնել դասապրոցեսի արդյունավետությունը, հետևաբար՝ աշակերտների կրթության որակը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0056, Գայի պողոտա 4, ՀՎՀՀ՝ 01021075)
4.	Ծրագիրը կատարողը	«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0056, Գայի պողոտա 4, ՀՎՀՀ՝ 01021075)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզերի հանրակրթական դպրոցներ, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	93,150,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզերի 115 հանրակրթական դպրոցներ, որոնք կգնահատվեն նախապես հրապարակված գնահատման սանդղակով՝ Գնահատող հանձնաժողովի կողմից հետևյալ չափանիշներով՝ 1) դիմում-փաթեթի ամբողջականություն. 2) ծրագրի շրջանակում կատարված նախագծային աշխատանքի որակ (թեմայի արդիականություն, նորարարություն, հետազոտման խորություն, պատմագիտական ճշգրտություն, համայնքային ներգրավվածություն և այլն).

		3) աշխատանքի ընթացքի որակ՝ սովորողների ներգրավվածություն, համագործակցություն, դերաբաշխում, կիրառվող գործիքակազմ և այլն. 4) օգտագործված աղբյուրների հարստություն. 5) տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառում. 6) նախագծային աշխատանքի ներկայացման որակ. 7) վերջնարդյունք և դրա կիրառելիություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի նոյեմբերի 26-ից մինչև 2026 թվականի մայիսի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է դիմում-հայտերի ընդունում և մշակում, դիմումատու դպրոցների հետ վերապատրաստումներ 21-րդ դարի հմտություններ, նախագծային ուսուցում, ՏՀՏ և այլ թեմաներով, դպրոցների կողմից նախագծային աշխատանքի իրականացում, կատարված աշխատանքների գրավոր ներկայացում, Գնահատող հանձնաժողովի ձևավորում (2023-2024 թվականներին հանձնաժողովում ներգրավված են եղել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի, հանրակրթական ոլորտի այլ ներկայացուցիչներ), գնահատում և առավելագույն միավոր հավաքած դպրոցներից 115 հաղթող դպրոցների ցանկի ձևավորում, տեխնիկայի նվիրաբերում դպրոցներին և այցելություն շահառու դպրոցներ, որի համար անհրաժեշտ է ձեռք բերել 115 հատ ինտերակտիվ դիսպլեյ՝ 93,150,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի նոյեմբերի 26-ից մինչև 2026 թվականի մայիսի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	115 հատ ինտերակտիվ դիսպլեյի ձեռքբերում և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 93,150,000 դրամ արժողությամբ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամը համագործակցում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն»

		հիմնադրամի հետ: Աշխարհացույց կրթական հարթակը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված է որպես ուսումնաօժանդակ գործիք, իսկ «Վիզուալ Հայաստան» հիմնադրամը՝ որպես ուսուցիչների պարտադիր վերապատրաստում իրականացնող կառույց:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

14.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ